ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

28 ապրիլի 2020 թվական

4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.30

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 19 անդամ՝

Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անահիտ Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Նուարդ Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սուրեն Էյրամջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Լիլիթ Կիրակոսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Գրիգորի Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Էռնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արթուր Իսպիրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սերգեյ Ապրեսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարցս վերաբերում է մեր կադրային քաղաքականությանը: Վերջերս ՀՀ վարչապետի կողմից միտք հնչեց, որ պետք է ձերբազատվենք նախկին կադրերից՝ Սերժի «թափթփուկներից»: Ես ցանկանում եմ տեղեկանալ Ձեր հետագա քայլերի մասին, և որո՞նք են Ձեր՝ որպես քաղաքապետ, մոտեցումներն այդ կապակցությամբ, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն հարցի համար: Անկեղծ ասած, մենք ինչպես սկսել ենք մեր կադրային քաղաքականությունը, նույնությամբ շարունակելու ենք, որովհետև մեր սկզբունքներն այդ հարցում, ըստ իս, շատ ճիշտ են: Մեզ համար ամենակարևորը կադրի պրոֆեսիոնալիզմն է, երկրորդը՝ պարտականությունների ճիշտ կատարումը և համայնքի գործունեությանը, աշխատակազմին ու բնակչությանը միտումնավոր կերպով չխանգարելն ու չվնասելը: Եթե կադրը համապատասխանում է այս երկու չափանիշներին, ապա նա պետք է շարունակի աշխատել և օգուտ տալ մեր համայնքին:

ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի անդամակցելու ցանկացած կուսակցության, և չի կարելի նրան աշխատանքից ազատել իր քաղաքական հայացքների համար, իհարկե, եթե դա չի խանգարում իր մասնագիտական գործունեությանը:

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար պարոն Թադևոսյանն արդեն մի քանի օր է դարձել է մամուլի «հերոս»: Կարծում եմ, շատերս ենք սպասում նրա պարզաբանումներին, թե ինչու է ցուցարար ծեծող և կաշառակերության համար մեղադրվող անձնավորությունը, վերադարձել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար պարոն Թադևոսյանը, խնդրեմ:

Թելման Թադևոսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, տիկին Խաչատրյան, շնորհակալություն հարցի համար: Թե ինչ է նախկինում արել Ձեր նշած անձնավորությունը, կարծում եմ, դրա գնահատականները տվել են թե՛ իրավապահ մարմինները, թե՛ հանրությունը: Ներկայի հետ կապված ասեմ, որ կարճ ժամանակ է, ինչ ես աշխատում եմ վարչական շրջանի ղեկավար, և այդ ընթացքում տվյալ աշխատողն իրեն դրսևորել է պատշաճ ձևով: Նշեմ նաև, որ մեր զրույցի ընթացքում նա ասել է, որ պատրաստ է ազատվել աշխատանքից՝ ներկայիս քաղաքական ուժի և քաղաքային իշխանության հետ կապված շահարկման թեմաները բացառելու նպատակով: Շնորհակալություն:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, արձագանքեմ, փաստորեն նախկին ռեժիմին ծառայող ցուցարար ծեծողն է, որ չի ուզում, որ նոր Հայաստանի նոր իշխանությունների համար խոսակցություն առաջանա, այլ ոչ՝ նոր Հայաստանի նոր իշխանությունների նշանակած թաղապետն է հեռացնում է նրան աշխատանքից: Ցավում եմ նոր Հայաստանի իշխանությունների համար, շնորհակալություն:

Երկրորդ հարցս հետևյալն է. ցանկանում եմ իմանալ ի՞նչ նորություն կա Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հարակից տարածքի մանկապարտեզի ցանկապատի վերաբերյալ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալ եմ, պարոն քաղաքապետ, տիկին Խաչատրյան, շնորհակալություն հարցի համար: Գիտեք, որ հիմա որևէ աշխատանք չի իրականացվում, բայց մենք պնդում ենք մեր դիրքորոշումն այդ հարցի շուրջ: Ասել ենք, որ ցանկապատը կառուցվելու է, նոր նախագիծը կա, այն վարչական շրջանի ղեկավարի մոտ է: Ցանկապատը կառուցվելու է այն տեսքով, ինչի վերաբերյալ մենք փոխհամաձայնության ենք եկել պարոն Բլեյանի հետ: Մեր պայմանավորվածություններում ոչինչ չի փոխվել, աշխատանքները կշարունակվեն, երբ մենք վերադառնանք բնականոն գործընթացներին:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Պարոն քաղաքապետ, հարցս կրկին վերաբերում է վերջին մեկ շաբաթվա ընթացքում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի շուրջ մամուլում բարձրացված աղմուկին:

Ինչպես գիտենք երեկ այստեղ շատ արագ կարգով մրցույթ է անցկացվել, որի արդյունքում երկու հաղթող է ճանաչվել: Դուք կընտրեք, թե ում եք նշանակելու, իհարկե կային որոշակի կանխատեսումներ, սա կրկին ըստ մամուլի եմ ասում, որ Դուք ունեք նախընտրած թեկնածու, բայց խոսքը սրա մասին չէ: Ես նաև սոցիալական մեդիայում հրապարակեցի տեսագրություն, որտեղ ներկայացրել էի՝ բառացի ցիտելով Ձեր խոսքը, որ Դուք շատ բարձր եք գնահատել «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատանքը, որը շուրջ մեկ տարի ղեկավարում էր պարոն Արմեն Բեգոյանը: Այնքան հիացած էիք այդ կենտրոնով, որ կանխատեսում էիք անում, որ հուսով եք պայմաններն այնքան լավ կլինեն, որ նույնիսկ այնտեղ մի քանի օր Ձեր հանգիստը կանցկացնեք:

Ի՞նչ պատահեց պարոն քաղաքապետ, Բեգոյանի հետ կապված այս թնջուկի մասին ուզում եմ լսել Ձեր պարզաբանումները: Ցանկանում եմ նաև անպայման արձագանքեք Ձեր կնոջ հետ կապված պատմություններին: Արմեն Բեգոյանն ուղղակի կերպով Ձեզ և Ձեր կնոջը մեղադրեց, քանի որ աշխատանքից ազատվելու դիմում գրելու առաջարկ արել է Ձեր կինը և հնարավոր չէր, որ նա այդ ճնշումներին դիմակայեր և դիմադրեր:

Այս հարցերի պատասխաններն եմ ցանկանում լսել:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Վերջին մասի հետ կապված, բնականաբար, և՛ ես, և՛ մեր մամլո ծառայությունը երբևիցե բամբասանքներին չենք անդրադառնում:

Մեր գործունեության մասին կարող եմ վստահ ասել, որ երբ պարոն Բեգոյանը տեղափոխվեց «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ՝ որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, սկսեցին խնդիրներ առաջանալ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ում, որն ինձ ստիպեց ավելի խորն ուսումնասիրել, թե ինչ վիճակում է ՀՈԱԿ-ը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ միջին աշխատակազմը, այսինքն՝ բուժակները, բժիշկները, որ աշխատել են նորմալ, այժմ էլ աշխատում են և շարունակելու են

աշխատել: Շատ մեծ խնդիրներ, բացթողումներ ու վրիպումներ կան կազմակերպչական առումով: Այս առիթով քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչությունն ուսումնասիրություն է կատարել, որի արդյունքում հայտնաբերվել են այդ բացթողումները: Կային նաև այնպիսի բացթողումներ, որոնք ուղարկվել են ՀՀ ոստիկանություն: ՀՀ ոստիկանությունն իր հերթին, քրեական գործ է հարուցել և ուղարկել քննչական ծառայություն: Ընթացքը կտեսնենք ինչ կլինի, սակայն կազմակերպչական մասով առաջացել էր խնդիրներ, որոնց լուծումը պետք է ապահովեր տնօրինությունը: Այդ կազմակերպությունում աշխատում է 32 հոգի, սակայն բավականին մեծ քանակությամբ աշխատակիցներ պետք է լինեին: Ինձ մոտ այդ մտավախությունը կար: Ես պարոն Բեգոյանին հրավիրել եմ ինձ մոտ, առաջարկել եմ, որ վերադառնա «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ, կարգավորի բոլոր խնդիրները, սխալների ուղղում կատարի և հետագա զարգացում տա այս ամենին: Ի զարմանս ինձ, պարոն Բեգոյանը հրաժարվեց: Ես ընդունեցի դա ի գիտություն և մենք շարժվեցինք առաջ:

Այնտեղ նշանակվեց նոր տնօրեն, ով հիմա աշխատում է: Այդ տնօրենի նշանակման հետ էր կապված վերահսկողության վարչության ուսումնասիրությունը, որովհետև անհրաժեշտ էր սահմանազատել մինչև նոր տնօրենի նշանակվելը և նրանից հետո կատարվածը:

Ինչ վերաբերում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի մրցույթին, ապա տեղեկացնեմ, որ այն շտապ չէր, մոտ մեկ ամիս առաջ է մրցույթը հայտարարվել: Դա բնական էր, որովհետև ժամանակավոր պաշտոնակատար է եղել, որը, ըստ իս, ունակ չէ կատարել իր պարտականությունները և քաղաքապետարանը մրցույթ է հայտարարել, որ ընտրվի նոր տնօրեն: Նորմալ կերպով անցել է ամեն ինչ, ոչ մի շտապողականություն չի եղել: Մրցույթն անցել է բաց, թափանցիկ, բոլորը եղել են և տեսել են, ամեն ինչ նորմալ է անցել: Իմ կողմից եղել է խիստ հանձնարարություն, որպեսզի պահպանվի սանիտարական նորմերը, սոցիալական հեռավորությունը: Մրցույթն անցկացվել է պատշաճ, ինչպես որ իրականացվում են բոլոր աշխատանքները Երևանի քաղաքապետարանում՝ ամենօրյա ռեժիմով:

Ինչ վերաբերում է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքին, երբ ինձ զեկուցվեց, որ շենքը գրեթե պատրաստ է, պարզվեց, որ, կրկին տնօրինության մեղքով, այնտեղ չկա կոյուղի: Այսինքն, որոշվել էր կառուցել շենքն այնպիսի մի վայրում, որտեղ չկա կոյուղի: Դա աբսուրդ է, տնօրինությունն առաջին հերթին դրա մասին պետք է մտածեր: Այժմ այնտեղ կոյուղի է կառուցվում և շենքն, իրապես, իր պայմաններով, կառուցվածքով և ծառայություններով, երևի թե լավագույնն է լինելու տարածաշրջանում: Այն

շատ լավ օրինակ է ծառայելու մնացած համայնքներին, որոնք, ցավոք սրտի, շատ վատ վիճակում են հայտնվել: ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենք, ըստ որի, իրենք այլևս չեն կարող իրենց գործողություններն անել այնպես, ինչպես արել են: Բացի այդ, նրանք չունեն այսպիսի կազմակերպություն և իրենք հայտնվել են ծանր վիճակում: Մենք ձեռք ենք մեկնում այս համայնքներին և առավելագույնս օգնում ենք:

Այս կենտրոնը բոլոր համայնքների համար կծառայի նաև որպես բազային կենտրոն:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Այս պահին մի դիտարկում անեմ՝ մենք կարող ենք արձանագրել, որ այդ կազմակերպության մեկ տարվա աշխատանքը բավարար չի եղել, դրական գնահատական չենք տալիս, որի մասին բազմիցս ասվել է: Արդյունքում բոլոր սթափեցնող կոչերը, մեր այցերը, որ պարբերաբար կատարել ենք այդ ՀՈԱԿ և ներկայացրել այնտեղ կատարվող մանրամասները, Ձեր կողմից արժանացել են բացասական գնահատականի՝ պարբերաբար նշելով, որ մենք փոքրիկ դիվիդենտներ ենք հավաքում՝ որպես ընդդիմություն: Սակայն փաստը ցույց է տալիս, որ ժամանակին, եթե ականջալուր լինեիք, կտեսնեիք, թե այնտեղ ինչպես է աշխատանքը կազմակերպվում:

Ցանկանում եմ նաև համոզվել, որ Դուք հաստատում եք, որ Ձեր կինը որևէ կերպ կապված չէ քաղաքային իշխանության գործառույթների հետ: Ճի՞շտ եմ հասկանում:

Հայկ Մարության

-Ես բազմիցս նշել եմ, որ իմ կինը, ինչպես նաև իմ շատ ընկերները, և՛ այդ կազմակերպության, և՛ տարբեր այլ ծրագրերի իրականացման գործում օգնում են ինձ:

Հռիփսիմե Առաքելյան

-Խոսքը վերաբերում է կադրային քաղաքականությանը, ինչպես ընդգծում է Ձեր նախկին ընկեր Արմեն Բեգոյանը:

Հայկ Մարության

-Ես պարոն Բեգոյանին 3 կամ 4 անգամ եմ տեսել մոտիկից: Կադրային քաղաքականության հետ կապված՝ ես բազմիցս նշել եմ, որ չկա որևէ մարդ, որը կարող է խառնվել Երևանի քաղաքապետարանի կադրային քաղաքականությանը: Այդ քաղաքականությունը, սկզբից մինչև վերջ, վարում եմ ես:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն: Հաջորդ հարցս վերաբերում է վերելակներին:

Պարոն քաղաքապետ, Դուք ինչպես նշել էիք նախորդ տարեվերջին, 500 վերելակ պետք է փոխվի Երևան քաղաքի հրատապ խնդիր ունեցող շենքերում: Ուզում եմ իմանալ ի՞նչ գործընթաց է իրականացվում, մրցույթներն ի՞նչ փուլում են: Ամենակարևորը՝ ինչպիսի՞

չափորոշիչներ եք սահմանել և ի՞նչ ձևաչափով է որոշվել, թե որ վարչական շրջաններում և որ շենքերի վերելակները պետք է փոխվեն:

Ես մի քանի փաստ ունեմ. Նոր Նորք վարչական շրջանում, որի բնակիչ եմ նաև ես, կան վթարային մի քանի վերելակներ, որոնք երկու-երեք օրը մեկ խափանվում են: Ես ճշտել եմ համատիրություններից, որ այդ վերելակներն ընդգրկված չեն փոխման ենթակա ցուցակում:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Շատ ճիշտ և տեղին հարց եք տալիս: Այո, մենք հայտարարել ենք 500 վերելակի մրցույթ, մրցույթը կայանալուց հետո, նախատեսվում է, որ մինչև տարեվերջ մենք պետք է ավարտենք այս աշխատանքները:

Ցուցակի չափորոշիչները եղել է հետևյալը, որ պետք է փոխվեն առավելագույնը վնասված և բնակիչների կյանքի համար վտանգավոր վերելակները: Հետազոտման արդյունքում պարզվեց, որ մոտ 3000 վերելակ իրապես շատ վատ վիճակում է: Քանի որ փոխելու ենք 500 վերելակ, բնականաբար, 2500 վերելակ կարող ենք գտնել Երևան քաղաքում, որ շատ վատ վիճակում են և դեռ չեն փոխվելու: Այստեղ ամենակարևորն այն է, որ այս ցուցակում առկա 500 վերելակն իրականում շատ վատ վիճակում են: Այս մասով իմ կողմից հանձնարարական է եղել քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանին, քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությանը և վարչական շրջանների ղեկավարներին՝ մանրակրկիտ ուսումնասիրություն կատարել և արդյունքում ընտրել վերելակները: Միանգամից առաջ անցնելով, ուզում եմ հայտարարել, որ իմ կողմից շատ խիստ հանձնարարական է եղել վերելակների ընտրության հարցում լինել անաչառ:

Եթե չեմ սխալվում սովետական միության փլուզումից հետո, մինչ օրս փոխվել է 30 վերելակ: Պարոն Արեյանն ավելի ստույգ կասի:

Կամո Արեյան

-Պարոն քաղաքապետ, 35 վերելակ է փոխվել:

Հայկ Մարության

-Այսինքն, սովետական միության փլուզումից հետո, առ այսօր, 35 վերելակ է փոխվել: Այժմ մենք, մեկ ու կես տարի աշխատելուց հետո, փոխում ենք 520 վերելակ:

Հռիփսիմե Առաքելյան

-Պարոն քաղաքապետ, միայն կխնդրեի, որ պարզաբանեիք այս պահին որքա՞ն վերելակ է արդեն գնվել մրցույթով և մինչև տարեվերջ այդ 500 վերելակը հասցնելու՞ ենք տեղադրել, թե ոչ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Լոտերը բաժանվել են 6 մասի, որպեսզի տարբեր ընկերություններ գան և մասնակցեն: Եթե լինի մի մեծ ընկերություն, որը կկարողանա ամեն տեղ մասնակցել և հաղթել, սա ուրիշ հարց է, բայց կլինեն մասնակից տարբեր ընկերություններ, որպեսզի իրենք՝ ներգրավելով տարբեր աշխատուժ, տարբեր տեղերում կարողանան փոխել: 500 վերելակ փոխելը բավականին դժվար և մեծ աշխատանք է: Պետք է նաև հաշվի առնել, որ պայման է դրված եղել, որ բոլոր վերելակները պետք է կարողանան սպասարկել հաշմանդամություն ունեցող անձանց: Հին, սովետական վերելակները նախատեսված չեն հաշմանդամների համար, դրա համար շախտաների և բացվածքի փոփոխություն պետք է լինի, որը նույնպես բավականին ժամանակատար աշխատանք է: Ես կարծում եմ, որ, եթե խոչընդոտներ չլինեն, մեր հաշվարկներով պետք է հասցնենք: Այժմ աշխատանքներն ընթանում են մեր պլանավորածի համաձայն:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Անահիտ Ասատրյան, խնդրեմ:

Անահիտ Ասատրյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարգելի գործընկերներ, այսօր սովորական օր չէ: Ապրիլի 28-ն է, որը ՄԱԿ-ի կազմակերպություններից մեկի՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ճանաչվել է որպես Աշխատանքում առողջության և անվտանգության պահպանման համաշխարհային օր: Այսօր՝ համաճարակային իրավիճակում, աշխատողների առողջության պահպանման տեսանկյունից շատ կարևոր է աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Մենք գիտենք, որ սրա հետ կապված կան քաղաքապետի և պարետի որոշումները, կա նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված ուղեցույցները: Այս ամենից բացի աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է, որ յուրաքանչյուր կազմակերպության ղեկավար աշխատողների առողջության և անվտանգության հետ կապված պետք է ընդունի ներքին իրավական ակտ:

Հարցս հետևյալն է. քաղաքապետարանում, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում, քաղաքապետարանի ենթակա կազմակերպություններում ի՞նչ է արվում այդ ուղղությամբ: Կան արդյոք այդ իրավական ակտերը, արդյոք կատարվում են այն ցուցումները, որոնք տրված են պարետի կողմից: Հսկողություն սահմանվու՞մ է այդ գործընթացի նկատմամբ, կան արդյոք խախտումներ, կարգապահական տույժեր՝ այդ գործողությունները սխալ կատարելու հետևանքով, ունե՞նք վարակված աշխատողներ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, տիկին Ասատրյան, քաղաքապետի որոշմամբ ստեղծվել է վարակի տարածման կանխարգելման և արձագանքման շտաբ, որի ղեկավարման աշխատանքները դրված են ինձ վրա: Ինչպես նաև շտաբին կից ստեղծվել է արտակարգ իրավիճակների հանձնաժողով, որը ղեկավարում է քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը: Վարչական շրջաններում աշխատանքը կազմակերպվում է նույն ձևաչափով: Համապատասխան իրավական ակտերն ընդունվել են, սակայն ելնելով երկրում հայտարարված արտակարգ դրությունից և համաճարակային իրավիճակից, հիմնականում գործում ենք ըստ պարետի որոշումների և ՀՀ առողջապահության նախարարության ցուցումների:

Մինչ երկրում արտակարգ դրություն հայտարարելը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից ստանում էինք խորհուրդներ՝ տարեց, խրոնիկ հիվանդություններ ունեցող և այլ ռիսկային խմբերի աշխատակիցների աշխատանքի սահմանափակումների վերաբերյալ, որոնք քննարկվել և հաշվի են առնվել հետագայում աշխատանքը կազմակերպելիս: Այժմ քաղաքապետարանում աշխատանքը կազմակերպվում է հերթապահությամբ, ոմանք աշխատում են հեռավար: Փորձում ենք աշխատասենյակներում շատ մարդաքանակ չլինի, որպեսզի աշխատողները նստեն համապատասխան հեռավորության վրա, բոլորն ապահովված են ախտահանող և պաշտպանող նյութերով: Նույնը վերաբերում է նաև վարչական շրջաններին, շտապ բուժօգնության ծառայությանը և պոլիկլինիկաներին:

Ինչ վերաբերում է հիվանդներին, ասեմ, որ հիվանդներ ունենք շտապ բուժօգնության ծառայությունից և այլ բժշկական հաստատություններից, սակայն հիվանդների թվաքանակ այս պահին չեմ կարող ներկայացնել:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

Թեհմինա Վարդանյան

-Առաջին հարցս կապված է 500 վերելակի հետ: Մամուլում տարածվեց, ես ինքս տեղեկություն ունեմ, որ մեր օրերում արդեն խոշոր գործարար դարձած Սամվել Ալեքսանյանն է պատրաստվում մրցույթը շահել, այսինքն՝ նրան է խոստացված մրցույթը: Ես նույնիսկ գիտեմ, որտեղից են բերվելու այդ վերելակները՝ Թուրքիայից: Խնդրում եմ հերքեք

կամ հաստատեք, բայց սա չդառնա «Ջերմուկ Գրուպ» ընկերության պատմությունը, որ ճեպազրույցի ժամանակ ասում եք որևէ շինթույլտվություն չենք տվել այդ ընկերությանը և ես, բառացիորեն 10 րոպեի ընթացքում, հրապարակում եմ «Ջերմուկ Գրուպ» ընկերության շինթույլտվությունները:

Խնդրում եմ հստակ պատասխանել ի՞նչ հարաբերությունների մեջ ենք Սամվել Ալեքսանյանի կամ նրան փոխկապակցված ընկերությունների հետ՝ վերելակների հետ կապված:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ասեմ, որ ոչ մի տենդերի հետ կապված ես նախօրոք տեղեկություն չեմ ունենում: Տենդերները կազմակերպվում են պարզ, բաց, թափանցիկ: Ով առաջարկում է լավագույն պայմանները՝ նա էլ հաղթում է: Ինձ հետաքրքրում է վերջնական արդյունքը, որ տվյալ ընկերությունն իր աշխատանքը հանձնի մեր տված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս կապված է վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում իրականացվող դրամահավաքին: Իմ տեղեկություններով տարբեր վարչական շրջաններում աշխատակիցներից հավաքվել է մոտ 20000-ական դրամ: Այսօր ցածր և միջին օղակների աշխատողների վիճակը շատ ծանր է, նրանք աշխատավարձի մեծ մասը ծախսում են տաքսիով աշխատավայր և տուն գնալու համար:

Պարոն քաղաքապետ, խնդրում եմ Դուք պատասխանեք, հետո նաև վարչական շրջանների ղեկավարները՝ արդյոք աշխատակիցներից հավաքվել է թեկուզ 10 դրամ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, տիկին Վարդանյան, նախ կցանկանամ նշեք, թե ինչի՞ համար է հավաքվել այդ գումարը և ո՞ր վարչական շրջանների մասին է խոսքը:

Թեհմինա Վարդանյան

-Գումարը հավաքվել է կորոնավիրուսի դեմ պայքարի և սոցիալապես անապահով ընտանիքներին օգնելու համար: Տեղեկություն ունեմ երկու վարչական շրջանների վերաբերյալ, սակայն չեմ կարող ասել, թե որոնք են դրանք:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, բնականաբար, այդպիսի տեղեկատվություն չունեմ, եթե որևէ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում նման բան տեղի է ունեցել, բոլոր ղեկավարներն այստեղ են, կարող են հաստատել կամ հերքել: Փաստորեն ոչ մի վարչական

շրջանի ղեկավար չի հաստատում Ձեզ հասած տեղեկությունը: Եթե ուզում եք մեզ օգնել, նշեք գոնե մեկ վարչական շրջան, որտեղ կատարվել է դրամահավաք: Իմ հանձնարարությամբ վերահսկողության վարչությունն այնտեղ կիրականացնի համապատասխան միջոցառումներ, այլապես ոչինչ անել չեմ կարող: Շնորհակալություն:

Թեհմինա Վարդանյան

-Պարոն քաղաքապետ, իմ մեջ գործ տալու ու մարդկանց փաստի առաջ կանգնեցնելու արվեստը, ցավոք, չկա: Դուք մտածեք ինչպես բացահայտել դա, եթե ոչ, հուսով եմ, շատ շուտ այդ աշխատակիցները մի օր կբարձրաձայնեն այդ մասին:

Հայկ Մարության

-Կարծում եմ, եթե Դուք ցանկանում եք օգտակար լինել աշխատանքին, պետք չէ որևէ անձի անուն տալ, ճիշտ կլիներ, որ նշեիք որ վարչական շրջանի մասին է խոսքը:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, ճիշտ է, առաջին հարցս այդքան էլ կապված չէ քաղաքային իշխանության հետ, սակայն ցանկանում եմ հետաքրքրվել կան արդյոք քննարկումներ պարետատան հետ, թե ե՞րբ կվերաբացվեն քաղաքի սրճարանները և բացօթյա ռեստորանները: Քաղաքացիներից բազմաթիվ նմանատիպ հարցեր ենք ստանում, հիմա նրանք կարող են ուղիղ եթերով տեղեկանալ, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն հարցի համար, պարոն Մանրիկյան: Քննարկումներ, բնականաբար, եղել են ոչ միայն ռեստորանային, այլ բոլոր ոլորտների հետ կապված, սակայն այս պահին պաշտոնական գրություն չկա: Այսօր վարչապետը հայտարարեց, որ մոտակա 10 օրում որոշ տնտեսվարողների գործունեությունները կթույլատրվեն: Շնորհակալություն:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն, կարծում եմ դա մեր քաղաքացիների համար լավագույն նվերը կլինի՝ մի փոքր այս հոգեբանական ընկճված վիճակը հաղթահարելու համար:

Երկրորդ հարցս հնչեցնեմ: Այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք այս համաճարակի պայմաններում չեն աշխատում, կտրվի արդյոք քաղաքային տուրքերի արտոնություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը, խնդրեմ:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Մանրիկյան, ինչպես գիտեք քաղաքային տուրքերն ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքի համար գանձվող տուրքերն են: Դրանց վճարման ռեժիմն ինքնին ենթադրում է, որ տուրք վճարողը գործունեություն չիրականացնելու հիմքով կարող է դիմել տուրքի վճարի կասեցման համար: Ըստ էության, մեր փոխարեն օրենսդիրն այստեղ արել է ինչ հնարավոր է և պետք է: Տնտեսվարողները կարող են այս հնարավորությունից օգտվել նույնիսկ հիմա:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան, խնդրեմ:

Նուարդ Վարդանյան

-Ցանկանում եմ խոսել արժեհամակարգից ու մտածողությունից: Երբևէ իմ ոչ մի գործընկեր չի կարող նշել, որ ես որևէ կադրի մասին խոսել եմ, որովհետև նա նախկին իշխանությանն է պատկանել, աշխատել է նրանց հետ կամ կապ է ունեցել: Ես նման տարանջատում երբևէ չեմ դնում:

Աջափնյակ վարչական շրջանի աշխատակից Արամայիս Ավետիսյանի մասով, ոչ թե խնդիր կա, թե նա ում ջատագովն է, դա էական չէ, այլ այդ մարդն արժեհամակարգային խնդիր ունի: Այդ արժեհամակարգային խնդիրն ամբողջությամբ հակասում է ներկայիս իշխանությանը և նրանց վարած քաղաքականությանն ու սկզբունքներին:

Ես տեսա, որ մեկ ժամ առաջ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Թելման Թադևոսյանը գրառում է կատարել, բայց չի անդրադարձել, որ սխալվել է, չի իմացել ով է, այժմ գիտի և նա կազատվի աշխատանքից: Արդյոք կարծում եք, որ այդ աշխատողը մտածողություն և արժեհամակարգ կարող է փոխել իր մեջ և այսուհետ նա կաշխատի լրիվ այլ արժեհամակարգով, ինչը որ, մենք՝ այս քաղաքական թիմով որդեգրել ենք:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Թելման Թադևոսյանը:

Թելման Թադևոսյան

-Շնորհակալություն հարցի համար: Ես արդեն այդ մարդու հետ կապված ասացի, իսկ ընդհանրապես մտածելակերպի հետ կապված, իմ կարծիքով, պետք է գտնվել մեծահոգի և ներողամիտ, հատկապես երբ, մարդիկ փորձում են ինչ-որ բան փոխել իրենց կյանքում: Սա չի

վերաբերում Արամայիսի գործի հետ կապված, այլ ընդհանրապես: Արամայիսի հետ կապված արդեն ասացի, որ այդ մարդը չի աշխատելու, այդ հարցը քննարկված և փակված է:

Նուարդ Վարդանյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Բոլորս գիտենք, որ կորոնավիրուսի հետ կապված մինչև օգոստոսի վերջ մանկապարտեզները չեն աշխատելու: Ունենք արդյոք ֆինանսական միջոցներ, որպեսզի այն մանկապարտեզները, որոնք ցուցակում ներառված են, վերանորոգվեն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցը տեղին է: Պլանավորված մեր բոլոր գործողությունները, վերանորոգման աշխատանքները, թե համայնքի բյուջեով նախատեսված, թե ՄԱԿ-ի ծրագրերով, լինելու են նախատեսված ժամանակահատվածներում: Ճիշտ է հիմա երեխաները մանկապարտեզ չեն հաճախում, իսկ մենք իրավունք ունենք աշխատանքներ իրականացնելու, միևնույնն է, չենք կարող անել, որովհետև մի տեղ դեռ մրցույթը չի կայացել, մյուս տեղում նախագիծը պատրաստ չէ և այլն: Ինչպես, որ պլանավորված է, կատարվելու է: Այս տարի բավականին մեծ աշխատանքներ իրականացվելու են, եթե ավելի մանրամասն եք ցանկանում տեղեկանալ, պարոն Սարգսյանին կխնդրենք ներկայացնի:

Արմեն Ներսիսյան

-Շնորհակալություն, ես պարոն Սարգսյանի հետ կխոսեմ հարցի շուրջ:

Երկրորդ հարցս հնչեցնեմ: Շենգավիթ վարչական շրջանում «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկում շրջանաձև երթևեկություն է կազմակերպվել: Ես այդտեղի բնակիչ եմ, կարող եմ փաստել, որ լուսացույցերի չգործարկելը և այդ տարբերակով աշխատելն արդյունավետ չէ: Այդ փոփոխության պատճառով 40 րոպե ժամանակ եմ վատնել տարածքում երթևեկելու համար: Կարծում եմ այդ փոփոխությունը տեղին չէր: Շենգավիթ վարչական շրջանը գերհագեցած է: Պետք է մտածել այդ տեղի համար կամ կամուրջներ կառուցել, չգիտեմ որտեղից գումար ձեռք կբերեք, կամ ներդրողներ կգտնենք: Պետք է կիրառվի կամ այդ տարբերակը, ամեն դեպքում, այս տարբերակն ընդհանրապես չաշխատեց: Շենգավիթ վարչական շրջանի շատ բնակիչներ կփաստեն իմ ասածը: Անգամ այս օրերին, որ կորոնավիրուսի հետ կապված մեքենաների քանակը քիչ են, 40 րոպե է տևել այդ տարածքում երթևեկությունը:

Հայկ Մարության

-Հասկացա Ձեր հարցը պարոն Ներսիսյան, շատ ճիշտ հարց եք տալիս: Այդտեղ, բնականաբար, տարբեր լուծումներ կարող են լինել: Ճանապարհային ոստիկանության հետ շատ վաղուց խոսակցություն է եղել, թե արդյոք այս մոդելն այդտեղ կաշխատի, թե ոչ: Շատ մարդիկ կային, ովքեր ասում էին, որ կաշխատի: Երկար ժամանակ այս գործընթացը չէինք սկսում, որովհետև այն ժամանակ, երբ երկիրն ապրում էր նորմալ տեմպով, շատ դժվար կլիներ փորձարկումներ անել: Օգտվելով այս առիթից, ճիշտ է լավ առիթ չէ, բայց քանի որ մարդիկ, մեքենաները քիչ են, բնականաբար, տրանսպորտի հոսքն այդքան շատ չէ, ճանապարհային ոստիկանության հետ որոշվեց այդտեղ այդ փորձարկումն իրականացնել: Հիմա փորձաշրջան է անցնում, ազդանշաններից մեկը Դուք եք, Սուրեն Էյրամջյանը, Լիլիթ Կիրակոսյանը նույն բանն էին փաստում, որ այդտեղ խնդիր է առաջանում: Սա մեզ անհրաժեշտ էր, որպեսզի տեսնեինք, նաև այն մարդիկ, ովքեր ասում էին, որ այդտեղ կաշխատի այդ մոդելը, համոզվեն, որ չի աշխատում և սկսենք կիրառել մնացած մոդելները:

Այնուամենայնիվ, կարծում եմ, շատ ճիշտ ժամանակին էր արված, որպեսզի լուրջ խնդիրներ չառաջացնենք քաղաքային ցանցում:

Հայկ Մարության

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյան, խնդրեմ:

Սուրեն Էյրամջյան

-Շնորհակալություն: Ուզում եմ անդրադառնալ մի հարցի, որը մտահոգում է նաև իմ մի շարք գործընկերներին, ովքեր Աջափնյակ վարչական շրջանի բնակիչներ են և այնտեղ են գործունեություն ծավալում: Ուզում եմ նաև ի լուր քաղաքացիների այս հարցը հնչեցնել:

Խոսքը վերաբերում է Նազարբեկյան թաղամասի հ.48 հասցեին: Արդեն տևական ժամանակ է մենք մրցույթներ ենք հայտարարում, սակայն մրցույթները տեղի չեն ունենում: Վերջերս անընդհատ անձրևներ են լինում և այդ շենքի բնակիչները չունեն տանիք: Այժմ մի դիլեմատիկ իրավիճակ է առաջացել. մի կողմից մենք առաջնորդվում ենք օրենքի պահանջով՝ մրցույթներ ենք հայտարարում, բայց դրանք չեն կայանում և մարդիկ տուժում են:

Հարցս հետևյալն է. կա արդյոք նորություն այդ մրցույթի վերաբերյալ, եթե չկա, ապա միգուցե ժամանակն է դիմել ՀՀ կառավարություն՝ մեկ անձից գնում կատարելու իրավունք ստանալու համար և վերջապես այս հարցը լուծենք:

Ես հասկանում եմ մշտապես քաղաքացիներից հնչում է այդ բողոքը, թե ինչու եք մեկ անձից գնում կատարում, բայց ինչքա՞ն կարելի է շարժվել օրենքի պահանջով, երբ այնտեղ տուժում են մեր քաղաքացիները: Միգուցե, իսկապես հասունացել է այն պահը, որ այլ ճանապարհով գնանք և այդ մարդկանց հարցը լուծենք, որովհետև հայտարարվում են

մրցույթներ, դրանք չեն կայանում, նորից ենք հայտարարում, նորից չեն կայանում, իսկ այդ մարդիկ շարունակում են ապրել այդ պայմաններում:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, այո՛, ճիշտ եք, ուզում ենք աշխատանքը կատարել, գումարն ունենք, սակայն օրենսդրությունը մեզ թույլ չի տալիս: Մրցույթ ենք հայտարարում, մասնակից չի լինում և մենք սպասում ենք մյուս մրցույթին ու այդպես շարունակ: Մարդիկ ապրում են այնտեղ և այդ խնդիրը չի լուծվում: Այդպիսի խնդիրներ էլի կան:

Ինձ համար ցավոտ մի խնդիր էլ կարող եմ ասել՝ աղբամանների հարցը: 4000 պլաստմասե աղբամանների ձեռքբերման համար մրցույթը հայտարարվել էր 2019թ. օգոստոս ամսին: Աղբամանները պետք է լինեին այստեղ հոկտեմբեր ամսին, 6-7 ամիս անցել է: Այս օրենսդրական քաշքշուկների պատճառով մենք խնդիր ունենք: Ես չգիտեմ ինչ անել, սա լուրջ հարց է:

Ձեր հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Այո՛, դեռ անցյալ տարվանից Նազարբեկյան թաղամասի հ.48 շենքի նախագիծը դրվում է մրցույթի: Անցյալ տարի հաղթող ճանաչվեց, սակայն աշխատանքները չկատարեց և ընկավ սև ցուցակ: Երկրորդ անգամ մրցույթ հայտարարեցինք, մասնակից չեղավ: Այս տարի ևս երկու անգամ մրցույթ ենք հայտարարել մասնակից չի եղել:

Հայկ Մարության

-Հարցի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-Շնորհակալություն: Նազարբեկյան թաղամասի հ.48 շենքի խնդիրը հետևյալն է. մենք նախագծի հետ կցել ենք նաև շենքի սեյսմիկ եզրակացությունը՝ 9-րդ հարկը վթարային է, պանելային ճողվածքներ կան: Միգուցե դրա հետ է կապված, որ կազմակերպությունները վախենում են մրցույթին մասնակցելուց:

Այսօր կրկին տեղադրվելու է մրցույթի հայտարարությունը, փաստաթղթերը տրամադրվել են քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանը:

Հայկ Մարության

-Գնումների մասով պարզաբանում կներկայացնի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Գնումների ընթացակարգի մասով տեղեկացնեմ, որ եթե մասնակից ներգրավելու այս փորձն էլ չստացվի, ապա տարբերակ ունենք գնման նախահաշվային գինն ավելացնելու, ինչպես նաև ծավալի մեջ սեյսմիկ 4-րդ կարգի վթարի վերացման և ամրացման աշխատանքը ներառելու: Եթե չստացվի, այնուամենայնիվ, օրենսդրությունը մեզ թույլ է տալիս երեք փորձից հետո գնալ ուղիղ գնման ընթացակարգի: Սա կլինի արդեն երրորդը, այս փորձն անպայման պետք է արվի:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Ես կխնդրեմ այս պատմությանն ուշադրություն դարձրեք, որը նաև վառ ապացույց է, որ բոլոր մրցույթները շատ բաց ու թափանցիկ են անցնում: Մարդիկ չեն ուզում մասնակցել, որովհետև գիտեն, որ համապատասխան վարչությունները պահանջելու են աշխատանքների 100%-ով իրականացում՝ տեխնիկական բնութագրին համապատասխան:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Արզումանյան փողոցի հ. 10 և հ. 17 շենքերին, որոնց պետք է հող հատկացվեր Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից: Հատկացվել է արդյոք, թե՝ ոչ: Բացի այդ, ես կարծում եմ, որ զուգահեռաբար պետք է լուծվի նաև Վարդաշեն 66/1 և 68ա վթարային շենքերի հարցը, ինչ որ ձևով միջոցներ հայթայթվի երկրորդ շենքի կառուցման համար, քաղաքն աղետալի վիճակից փրկելու համար:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը, խնդրեմ:

-Հայկ Սարգսյան

-Շնորհակալություն, տեղեկացնեմ, որ Պետական գույքի կառավարման կոմիտեն ուղարկել է պատասխանը, խնդիրը մեր դաշտում է: Քանի որ տարածքը պետք է չափագրվի և քարտեզագրվի, իսկ արտակարգ դրության պայմաններում այդ կառույցը չի աշխատում, անհրաժեշտ է սպասել մինչև արտակարգ դրությունն ավարտվի և գործառույթներն իրականացվեն: Այնպես որ մենք գործընթացին հետևում ենք:

Հայկ Մարության

-Վարդաշեն 66/1 և 68ա վթարային շենքերի հետ կապված ավելացնեմ, որ դա մեր բոլորի որոշելիքն է, սակայն եթե դա անենք, ինչ որ մի բան չի արվելու, քանի որ բյուջեն անսպառ չի և, ցավոք սրտի, Երևանի խնդիրների համեմատ բավականին փոքր է: Ես չեմ ասում այո՛, կանենք, բայց ասում եմ այո՛, մենք պետք է մտածենք, որ անենք:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս վերաբերում է քաղաքի 7-րդ, 8-րդ, 9-րդ գոտիներում առկա ինքնակամ շինություններին, որոնք թեպետ կառուցված են համայնքային հողի վրա, բայց համապատասխանում են քաղաքաշինական նորմերին: Կարծում եմ այստեղ մենք պետք է մի քաղաքականություն որդեգրենք, օրինականացնենք այդ շինությունները, որի հետևանքով կավելանան բյուջե կատարվող մուտքագրումները:

Քաղաքում առկա են նաև բազմաթիվ հասարակական տարածքներ, որոնք սեփականաշնորհված են, բայց կառուցապատված են համայնքային հողի վրա՝ վարձակալության հիմունքներով: Չեք պատրաստվում արդյոք այդ հողերը վաճառել տվյալ տարածքների սեփականատերերին, որպեսզի կարողանանք ավելացնել բյուջեի մուտքերը և հաղթահարենք այս նոր կորոնավիրուսի հետևանքով ստեղծված ճգնաժամը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Հարությունյան, հարցի առաջին մասով վերջերս քննարկում եղավ պարոն Մեսչյանի հետ, հարցը մեր օրակարգում է: Հաշվի կառնենք որոշ չափանիշներ և կգործենք ըստ այդ չափանիշների: Վարձակալած հողերի հետ կապված ասեմ, որ դրանց տերը մենք ենք, պետք է նայենք, թե ո՞ր տարբերակն է ավելի նպատակահարմար և եկամտաբեր քաղաքի համար, վաճառել, թե՞ թողնել վարձակալությամբ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալ եմ պատասխանների համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյան, խնդրեմ:

Լիլիթ Կիրակոսյան

-Անցյալ տարի դեկտեմբերին 3.4 մլրդ դրամ հաստատեցինք «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի համար, որպեսզի կազմակերպությունն աշխատանքներն սկսի նոր տարբերակով և նոր մոտեցումով՝ հաշվի առնելով հնում առաջացած շատ խնդիրներ: 3.4 մլրդ դրամը փոխանցեցինք և ՀՈԱԿ-ը, կարծես թե սկսեց իր աշխատանքները, լավ, թե վատ: Վերջին ժամանակներում սոցիալական կայքերում անընդհատ պտտվում են բողոքներ, որ այս ՀՈԱԿ-ը բավականին վատ է աշխատում: Ես

ցանկանում եմ մի նամակ կարդալ, որը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրինությունը սույն թվականի փետրվարի 10-ին ուղղել է քաղաքապետարան՝ խնդրելով համապատասխան տարածք տրամադրել, որովհետև չունեն տարածք: Աշխատում են շատ փոքրիկ հատվածում և ընդամենը մի քանի մասնագետ են կարողանում այդտեղ տեղավորվել ու աշխատել: Սակայն ֆունդամենտալ այն կարողությունների տեր մարդիկ, ովքեր իսկապես պետք է ՀՈԱԿ-ին կարողանան նոր թև տալ, նոր ուժ տալ, չեն կարողանում գործի գալ կամ անգամ ընդունված չեն աշխատանքի: Պատճառն այն է, որ նույն թվականի փետրվարի 25-ին քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վահե Խաչատրյանը պատասխանել է, որ մենք քննարկեցինք, բայց գտանք, որ այս պահի դրությամբ համապատասխան տարածք չունենք տրամադրելու: Երկրորդ պատասխանը եղել է այն, որ տարածքի տրամադրումն ավագանու լիազորության սահմանում է:

Ես ցանկանում եմ նշել մի քանի կարևոր վարչություններ, որոնք այս պահին չեն աշխատում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում: Դրանցից են՝ թափոնների տեսակավորման, լանդշաֆտային ճարտարապետության և դիզայնի, ՏՏ մոնիթորինգի և քարտեզագրության, տնտեսական վարչությունները, ագրոքիմիական բաժինը, ավտոտրանսպորտային պարկը: Սրանք վարչություններ են, որոնք պետք է ունենան իրենց բաժինները, տարբեր ենթաբաժինները: Մենք այսօր ինչ ենք անում՝ էտում ենք, կանաչը թափում ենք, չորացած կեղևները մաքրում ենք, բայց այն աշխատանքը, ինչի համար 3.4 մլդ դրամը փոխանցվել է, փաստացի ՀՈԱԿ-ը չի անում: Քանի որ քաղաքապետարանը պատասխանում է, որ մենք քննարկեցինք Ձեր նամակը և հասկացանք, որ տարածք չունենք: Եթե տարածք չունեինք, ինչու այդքան հապճեպ կազմվեց կանոնադրությունը և ներկայացվեց ավագանու նիստի քննարկմանը: Այն հաստատեցինք, ցանկացանք լավագույնն անել: Հիմա քաղաքապետարանը պատասխանում է, որ չունի տարածք, այն դեպքում, որ ինքս, մի քանի ճշտում արել եմ, որ և՛ քաղաքապետարանի 2-րդ մասնաշենքում, և՛ Երևանի այլ վարչական շրջաններում կան տարածքներ, որոնք ազատ են:

Այս պարագայում, բնական է, որ ժողովուրդը կարող է բողոքել, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը շատ վատ է աշխատում և մեր կողմից նաև լինի խոստովանություն, որ այո՛, վատ է աշխատում: Սա նրա հետևանքով է, որ տնօրինությունն ուղարկում է խնդրանք, որպեսզի իրենց տարածք հատկացվի, որին ի պատասխան՝ պարոն Խաչատրյանը, ոչ թե համակարգողը, ասում է, որ չկա համապատասխան տարածք: Ես ցանկանում եմ հասկանալ այս մոտեցումը որքանո՞վ է ճիշտ: Հանրային ընկալման մասին, որ խոսում ենք, փաստորեն, այն ճիշտ է դառնում:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ տիկին Կիրակոսյան, շատ ճիշտ և տեղին հարց եք տալիս: Կան գործընթացներ, որոնք եթե ավելի ուշ սկսվեին ավելի լավ կլիներ: Այդ գործընթացներից ամենավառ օրինակն աղբահանության և սանմաքրման հիմնարկն էր: Այդ հիմնարկը, երբ ստեղծվեց, ինքս եմ դա տեսել և մի քանի անգամ եղել այնտեղ, մենք նստել ենք գետնին: «Երևանտրանս» ընկերության տարածքում էին գործունեություն ծավալում, որտեղ ոչ ազատ աթոռ կար, ոչ սեղան և սկզբնական շրջանում գետնին նստած էին աշխատում: Պետք է գնման գործընթաց լինի: Մինչ այդ գործընթացի լինելը տնօրենը և տեղակալը նստում էին գետնին, մոտ մի տարի հետո նոր տեղափոխվել են: Դա սարսափելի էր, բայց մենք անցանք այդ ընթացքը: Նույն վիճակն այստեղ է, նախատեսված է, որ պետք է լինի տարածք, ընդամենը ժամանակի հարց է:

Ինչու շուտ ստեղծեցինք հիմնարկը, որովհետև կար դրա անհրաժեշտությունը: Մենք կարող էինք սպասել, տարածքը վերանորոգել, պատրաստել, բայց մի տարի հետ կընկնեինք, ինչը չէինք ցանկանում: Մենք ցանկանում էինք հիմնարկն ստեղծել այս տարի, այո՛, մի փոքր դժվարություններով, բայց դա ժամանակի հարց է:

Քաղաքապետարանի 2-րդ մասնաշենքում կա ազատ տարածք, որն անհրաժեշտ է նաև «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ընկերությանը: Պետք է քննարկել այս հարցը և որոշում կայացնել:

Լիլիթ Կիրակոսյան

-Շնորհակալություն այն բոլոր մարդկանց, Ձեզ, վարչական շրջանների ղեկավարներին, ովքեր ներգրավված են այս գործընթացի մեջ: ՀՈԱԿ-ի ստեղծման առաջին օրվանից, ինքս մեծ շահագրգռվածություն եմ ունեցել, որպեսզի կարողանամ օգտակար լինել և՛ մասնագիտական, և՛ խորհրդատվական մասով: Այնուամենայնիվ, ՀՈԱԿ-ի կանոնադրությունում, չգիտեմ դա քաղաքապետարանի բացթողումն է, թե ոչ, հստակ ասվում է, որ այսուհետև բակային տարածքներում կանաչապատումը պետք է իրականացնի ոչ թե «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը, որ մինչ այդ անում էին վարչական շրջանները, այլ պետք է կատարեն միայն հանրային տարածքներում, որ մինչ այդ չէին անում վարչական շրջանները: Այս մասում բացթողում կա, որը կարելի էր քննարկել և կարելի է քննարկել նաև հիմա:

Ես ինքս առնչվել եմ այս խնդրի հետ, երբ Միսաք Մանուշյանի անվան պուրակում ծառեր էին կտրտում: Ես գնացել եմ, կանչել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենին և հարցրել եմ արդյոք այս ծառերը քարտեզագրված են: Նա պատասխանել է՝ ո՛չ: Այլ խնդիրներ են լինում, հարցեր եմ տալիս, ասում է՝ ոչ: Պարզվում

է մի ամբողջ վարչություն, այդ 3.4 մլդ դրամով ստեղծված վարչությունները, չեն աշխատում: Փաստացի հիմա գարուն է և ամենահարմար ժամանակահատվածն է բնապահպանական բոլոր հարցերին լուծում տալու համար: Կարծում եմ առաջնային պետք է լինի այն, որ այդ տարածքները, որ Դուք ասում եք, գոնե հիմա տրամադրվեն այս ՀՈԱԿ-ին, որպեսզի կարողանան այս աշխատանքները հավուր պատշաճի իրականացնել:

Հայկ Մարության

-Թող տրամադրվի:

Լիլիթ Կիրակոսյան

-Թող տրամադրվի, բայց Վահե Խաչատրյանը պատասխանում է, որ հնարավոր չէ:

Հայկ Մարության

-Դա նշանակում է, որ այս պահին հնարավոր չէ:

Լիլիթ Կիրակոսյան

-Քաղաքապետարանի 2-րդ մասնաշենքի 6-րդ հարկում կա ազատ տարածք:

Հայկ Մարության

-Նորից եմ ասում, 6-րդ հարկի տարածքը «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ընկերության համար է նախատեսված:

Տիկին Կիրակոսյան, եթե տարածք ունեք, տրամադրեք:

Լիլիթ Կիրակոսյան

-Ես չունեմ:

Հայկ Մարության

-Դուք չունեք, մենք կստեղծենք:

Լիլիթ Կիրակոսյան

-Շնորհակալ եմ, երկրորդ հարցս հնչեցնեմ, որը կրկին կապված է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հետ: Կազմակերպության աշխատողները, ովքեր մի քանի ամիս առաջ ընդունվել են աշխատանքի, խնդրանքով գրել են, որ իրենց համապատասխան քարտեր տրամադրվեն, որպեսզի տնօրինությունն ամեն անգամ ստիպված չլինի իջնել ներքև և խնդրել, որ իրենց թույլ տան ներս մտնել: Պատասխանը եղել է հետևյալը, որ չի տրամադրվել: Ինչու՞ չեն տրամադրվել քարտերը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի աշխատակազմի քարտուղար Վահե Խաչատրյանը:

Վահե Խաչատրյան

-«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ընկերությանը պետք է տրվի, որ տրամադրեն: Քարտի տպագրման գործընթաց պետք է տեղի ունենա: Վճարման

հետ կապված որոշակի խնդիրներ ու պարզաբանումներ կան: Ասել եմ, որ վերանայեն հարցը, եթե հնարավոր է անվճար տրամադրեն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան, խնդրեմ:

Գրիգորի Երիցյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է կադրային քաղաքականությանը: Վարչապետը որոշ ժամանակ առաջ խոսում էր այն մասին, որ պետական ապարատը դիմադրում է բարեփոխումներին: Բոլորս գիտենք, որ հեղափոխությունից հետո բոլորին տրվել էր հավասար հնարավորություն՝ վերափոխվելու, դառնալու ավելի լավը, ապացուցելու, որ նոր Հայաստանում հնարավոր է աշխատել խաղի նոր կանոններով: Նույն հնարավորությունը տվել եք նաև Դուք այս շենքում, այս աշխատակազմին և մեր ենթակայության գտնվող հիմնարկներին: Ո՞րն է Ձեր գնահատականը մեկուկես տարի անց, դեռևս կա՞ այդ դիմադրությունը մեր բարեփոխումների օրակարգին, թե հաղթահարել ենք այդ պատնեշը և կոտրել ենք այդ դիմադրությունը: Եթե դեռ կա, արդյոք մենք աշխատանքներ ենք տանելու այդ դիմադրությունը կոտրելու ուղղությամբ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, դիմադրությունը կարելի է բաժանել մի քանի կատեգորիաների՝ ամենավատը հատուկ դիմադրությունն է, երկրորդը՝ մարդկային կատեգորիան է, ալարել կամ չուզենալ աշխատել: Այստեղ կան օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրներ: Օբյեկտիվը մարդկային ալարկոտությունն է, որն եկել է դարերով, և քանի դեռ մարդկությունը գոյատևում է, այն կլինի: Երրորդ կատեգորիան՝ մոտիվացիայի կորուստն է:

Պետք է նշեմ, որ մի ժամանակ Երևանի քաղաքապետարանն ամենակոռումպացված կառույցներից մեկն էր, իսկ այսօր համակարգային կոռուպցիան քաղաքապետարանում իսպառ վերացվել է: Մարդիկ հիմա աշխատում են 5, 8 կամ 10 անգամ քիչ գումար: Կա երրորդ կատեգորիան՝ միջգերատեսչական, որ յուրաքանչյուր գերատեսչություն «վերմակը քաշում է իր վրա» և ուզում է, որ իր համար լավ լինի:

Ձեր հարցին ի պատասխան ասեմ, որ առաջին կատեգորիային պատկանող աշխատողներ կան, նրանք շատ ավելի քիչ են: Նրանց ուղղակի հայտնաբերում ես և ազատում աշխատանքից, զուտ նրա համար, որ նրանք վնաս են տալիս համայնքին: Երկրորդ կատեգորիան ավելի պրոբլեմատիկ է: Այդ կատեգորիայի աշխատողների աշխատանքը գնահատելն ավելի շատ ժամանակ է պահանջելու, մենք պետք է գնանք նրան, որ կադրերի փոփոխությամբ ունենանք լավագույն արդյունքներ: Մարդն ինքն իր մեջ էլ կարող է փոխվել, դառնալ ավելի լավ կադր: Այնուամենայնիվ, եթե զգում ենք, որ չի աշխատում, չի ուզում, չի

ստացվում կամ մոտիվացիա չունի, ասում ենք գնացեք թող մեկ ուրիշը գա, ով ավելի երիտասարդ է, ապացուցելու բան ունի, մոտիվացիա ունի:

Գրիգորի Երիցյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկրորդ հարցս սոցիալական ուղղվածություն ունի: Այս համավարակի օրերին, երբ շատերս ստիպված ենք մնալ տանը, մեր քաղաքում ապրում են մարդիկ, ովքեր միշտ են ապրում տանը և միշտ են մնում տանը զուտ այն պատճառով, որ քաղաքը հարմարեցված չի իրենց: Գիտեմ, որ տրանսպորտային համակարգը, երբ փոխվի, մենք ունենք գլոբալ մատչելիության ծրագիր, բոլոր տրանսպորտային միջոցները լինելու են մատչելի, բայց մինչ այդ կյանքը շարունակվում է, իրավիճակը լավանալու դեպքում մարդիկ պետք է դուրս գան, իրենց գործերով զբաղվեն:

Հարցս հետևյալն է. ի՞նչ ծրագիր ունենք, որով մենք կկարողանանք փոխհատուցել այդ անհարմարությունն այն մարդկանց, ովքեր ունեն հենաշարժողական խնդիրներ, տրանսպորտից օգտվել չեն կարող և այլն: Գիտեմ, որ սոցիալական հարցերի և աշխատանքի նախարարի հետ այս թեմայով քննարկումներ են եղել, ուստի՝ կցանկանայի մեր քաղաքացիներին տեղյակ պահեիք, թե ինչ արդյունքներ կան և ինչ ծրագրեր կան այս ուղղությամբ: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը, խնդրեմ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, ես արդեն ասել եմ, որ սոցիալական ոլորտում պատրաստվում ենք փոփոխություններ իրականացնել: Մեծ աշխատանք է կատարվել, որը ներկայացրել ենք քաղաքապետին: Ստացել ենք նրա հավանությունը, կարծում եմ, այս շաբաթ ավագանու քննարկմանը կներկայացնենք, թե սոցիալական ոլորտում ինչ բարեփոխումներ ենք ուզում իրականացնել: Եթե հավանության արժանանա, Երևան համայնքում մենք կունենանք նոր սոցիալական համակարգ: Դրանից հետո սոցիալական ոլորտում կկարողանանք իրագործել այն բոլոր ծրագրերը, որոնք կլինեն մեր ռազմավարության շրջանակներում: Առաջարկում եմ, որ բարձրացրած խնդիրները քննարկենք հենց այդ շրջանակներում, որպեսզի առանձին կետային լուծումներ չպահանջվի:

Գրիգորի Երիցյան

-Շնորհակալություն, սոցիալական ոլորտում, իրոք, առաջընթացը տեսնում ենք, այս ոլորտում ռեալ բարեփոխումներ են կատարվում, ինչի համար շնորհակալություն, կսպասենք արդյունքներին:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ: Սաթենիկ Մկրտչյանը բացակայում է դահլիճից: Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսով, խնդրեմ:

Էռնեստ Ավանեսով

-Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակային տարածքներում ոռոգման համակարգի գործընթացի վերաբերյալ ի՞նչ ծրագրեր կան: Ես զրուցել եմ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետների հետ, ինձ հավաստիացնում էին, որ եթե հիմնական փողոցից այդ ջուրը գնա բակային տարածք՝ ճնշումը կընկնի: Ցանկանում եմ հավաստիացնել, որ շատ տեղերում այդ ջուրը պարզապես գնում, կորում է, այն դեպքում, որ, թեկուզ ցածր ճնշմամբ, կարող էր գնալ բակային տարածքներ, հատկապես այս շրջանում, երբ մեծ թափով ծառատունկեր են իրականացվում: Մենք ևս ծառատունկ ենք իրականացրել մեր բակում, բայց այդ գործընթացը դժվար է տեղի ունենում, որովհետև եթե չկա ոռոգման ջուր, կարելի է ասել, որ այդ ծախսերն անհիմն են:

Երկրորդ հարցս՝ «Ակտիվ քաղաքացի» նախաձեռնության մրցույթի հաղթող նախագծերի իրագործման մասին է, քանի որ այնտեղ շատ հետաքրքիր նախագծեր կան, որոնք իրոք արժանի էին հաղթանակի: Մեր նախընտրական խոստումներից և սկզբունքներից մեկը՝ ուղիղ ժողովրդավարությունը, այդտեղ կյանքի կոչվեց և դա ողջունելի է: Կցանկանայի իմանալ, թե ի՞նչ փուլում է:

Հայկ Մարության

-Առաջին հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Դավիթ Կարապետյանը:

Դավիթ Կարապետյան

-Շնորհակալություն: Մեր բյուջեով 120 մլն դրամ գումար ունենք նախատեսած բակային տարածքների բարեկարգման, ոռոգման ցանցի նորոգման և նոր ցանցի տեղադրման համար: Արտակարգ դրության հետ կապված, քանի որ բյուջեի հավաքագրման խնդիր կա, այս պահին այդ գործընթացը սառեցված է, պետք է քննարկում իրականացվի և որոշվի, թե որ մասն է օգտագործվելու և որ մասը՝ ոչ: Դրա համար այս պահին Ձեզ ստույգ թիվ չեմ կարող ասել, բայց, բնականաբար, բակերում աշխատանքներ կատարվելու են: Վերանորոգման աշխատանքները պարբերաբար կատարվում են, կատարվելու են նաև հրատապ ծրագրերով նախատեսված մեր գործառույթներում: Հրատապ ծրագրերի մրցույթը կայանալուց հետո առաջնահերթության կարգում է ոռոգման ցանցի վերանորոգման հարցը՝ մի քանի կարևոր հատվածներում:

Հայկ Մարության

-Լրացուցիչ պարզաբանում կներկայացնի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Ոռոգման հետ կապված անցյալ տարի ներկայացրել ենք ոռոգման ցանցը և ակնհայտ երևում էր, որ ոռոգման ջուրը հիմնականում գալիս է Սևանից: Անցյալ տարի՝ հունիսի 15-ին, Սևանում ջրի բացթողում է եղել, բայց եղանակային պայմանները մեզ մոտ բավականին տաք է և ոռոգման սեզոնն ավելի շուտ է սկսվում: Դեպքեր ունեցանք, որ շատ տեղերում խոտը չորացավ, քանի որ ջուրն ուշացավ: Այսինքն, այստեղ երկու խնդիր կա. առաջինը՝ ցանցն է, երկրորդը՝ ջրի մատակարարումը:

Ցանցի հետ կապված՝ բոլոր վարչական շրջաններում գույքագրված խնդիրների լուծման համար մրցույթ է հայտարարվել, որպեսզի ձեռք բերվեն խողովակներ և աստիճանաբար այդ խողովակների փոփոխություն իրականացվի: Ոռոգման ցանցի հետ կապված արդեն «Երևան» ջրօգտագործողների ընկերության հետ պայմանավորվածություն ունենք: Կարծում ենք, որ մայիսի կեսերից կամ մայիսի առաջին շաբաթվանից արդեն ոռոգման ջուրը կունենանք:

Հայկ Մարության

-Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-«Ակտիվ քաղաքացի» նախագծի վերաբերյալ բոլոր մրցույթները հայտարարվել են՝ բացառությամբ մեկ մրցույթից, որը «Եռաբլուր» զինվորական պանթեոնի տարածքում հերոսների ծառուղի ստեղծելու հարցն է: Հարցը ՀՀ պաշտպանության նախարարության հետ բանակցային փուլում է, այդ պատճառով մրցույթը չի հայտարարվել:

8 նախագծից 7-ը տեղադրվել է, միայն մեկն է մնացել, որի պայմանագիրը չենք կնքել, բանակցային փուլում է՝ Հաղթանակ թաղամասում մարզական համալիրի ստեղծման նախագիծն է: Չի կայացել նաև Նուբարաշենի սքեյթ պարկի նախագծի մրցույթը՝ մասնակից չլինելու պատճառով: Մնացած 7 նախագծի վերաբերյալ արդեն պայմանագրերը կնքված են:

Էռնեստ Ավանեսով

-Շնորհակալություն պատասխանի համար, բայց որպեսզի ավելի հստակ լինի իմ հարցը. քանի՞ նախագիծ էր հաղթել, այդ նախագծերից քանի՞սն են արվել և որոնք չեն արվել, ի՞նչ ժամկետներում է նախատեսված դրանց կատարումը:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն: Եթե չեմ սխալվում 10 կամ 12 հաղթող ունենք, որոնցից այդ աշխատանքներն իրականացնելու համար հարկավոր էր 8 նախագծանախահաշվային փաստաթղթեր: Այդ 8 փաստաթղթերից 7-ի մասով արդեն ունենք հաղթողներ, որոնք, ըստ պլանավորված ժամկետների, երկու ամսվա ընթացքում, պետք է ներկայացնեն նախագծերը: Մյուսը՝ դա Նուբարաշեն վարչական շրջանի սքեյթ պարկն է, որի մրցույթը չի կայացել և կրկնակի մրցույթ ենք հայտարարել: Այդ 7 նախագծանախահաշվային փաստաթղթերը, երբ պատրաստ լինեն, պետք է արդեն մրցույթ հայտարարենք: Ժամկետներն ըստ դրա է:

Հայկ Մարության

-Շնորհակալություն: Պարոն Ավանեսով, եթե Դուք կցանկանաք ավելի ծավալուն տեղեկատվություն ստանալ, կարող եք դիմել քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ, «Ակտիվ քաղաքացի» նախագծի արդյունքներն ամփոփող հանձնաժողովի նախագահ Իոսիֆ Կուբատյանին, ինչպես նաև շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանին, և Ձեզ կտրամադրեն մանրամասն տեղեկատվություն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Առաջին հարցս հետևյալն է. անցյալ տարի Երևանի ավագանին հաստատեց իմ գործընկերոջ մի նախագիծը, որով Երևանի քաղաքապետին կից պետք է ձևավորվեին թվով 11 հանրային խորհուրդ: Ցանկանում եմ տեղեկանալ, մինչ մարտ ամիսը՝ մինչ համաճարակի հայաստանյան ճգնաժամային իրավիճակը, այդ 11 հանրային խորհուրդներից քանի՞սն են ձևավորվել և ի՞նչ չափորոշիչներով: Ուզում եմ մասնավորեցնել՝ առողջ ապրելակերպի և սպորտի հարցերով հանրային խորհրդի ձևավորումն ի՞նչ փուլում է:

Հայկ Մարության

-Նշեմ, որ քաղաքաշինական խորհուրդը ձևավորված է և բավականին ակտիվ գործում է: Մնացածի մասով, անկեղծ ասեմ, ինձ դեռ պետք չեն եղել այդ խորհուրդների նիստերը, դրա համար մինչև վերջ ձևավորված չեն: Ես կարծում եմ խորհուրդները կձևավորվեն ըստ պահանջի: Խորհուրդը երբ ձևավորվեց, պետք է նիստ հրավիրի և ինչ-որ հարցերի պատասխանի: Քաղաքաշինության ոլորտում շատ են լինում քննարկելու հարցեր և խորհրդի քննարկման արդյունքում մի հայտարարի ենք գալիս: Ես անկեղծ պետք է լինեմ, այնպիսի հարցեր չեն եղել, որոնց շուրջ չեմ կարողացել կողմնորոշվել և դրանց կարիքը եղել է: Ավելի

շատ այդ բացը լրացրել եմ փոխքաղաքապետերի հետ քննարկումներով: Միասին հավաքվելով և ներգրավելով նաև վարչությունների պետերին, այդ ոլորտի մասնագետներին, այդ ձևով լուծումը տվել ենք: Կարծում եմ քիչ-քիչ կհամալրենք և ավարտին կհասցնենք այդ խորհուրդների ձևավորման գործընթացը:

Արման Անտոնյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ, նախապես ասելով, որ որևէ մեկին որակավորում չեմ տալիս, սակայն մտահոգությունս հետևյալն է. Երևանի ավագանու անդամները բազմիցս գրությունների պատասխաններ են ստանում, որոնք մեղմ ասած աբսուրդի ժանրից են և շատ դեպքերում չեն համապատասխանում հարցման բովանդակությանը:

Իմ հերթական հարցումը մի քիչ այլ էր և այս հանրայնացման նպատակը մեկն է, որ խնդրենք քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցներին էլ ավելի լուրջ մոտենալ իրենց գործունեությանը, առավել ևս Երևանի ավագանու անդամների հարցումներին լիարժեք պատասխանելու գործում: Ինձ մոտ մի գաղափար ծնվեց, որի շուրջ մի քանի հարցումներ եմ արել, որից մեկը վերաբերում էր Բանվորի և Լենինի արձանների պատվանդանների գոյությանը, գտնվելու վայրին և այլն: Ստացել եմ պատասխան, որտեղ նշված է, որ արձանների գտնվելու վայրի և վիճակի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: Չեմ ուզում որակավորում տալ, բայց սա պատասխան չէ ավագանու անդամին՝ այն առումով, որ առնվազն, եթե տեղեկատվություն չկա, գոնե պետք է ուղղորդել: Մենք բոլորս էլ գիտենք, թե որտեղ է գտնվում Լենինի արձանը: Այս պատասխանը կառուցողական չէ:

Ուզում եմ հասկանալ ո՞վ է վերահսկում պատասխանները և ինչպե՞ս անենք, որ այս հարց ու պատասխանները լինեն բովանդակային:

Հայկ Մարության

-Այս հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Իոսիֆ Կուբատյանը:

Իոսիֆ Կուբատյան

-Ես չգիտեմ արձանները որտեղ են, եթե Ձեզ նման պատասխան են տվել, ուրեմն իրականում քաղաքապետարանի արխիվում այդ տեղեկատվությունն առկա չի եղել: Մենք Ձեր հարցմանը չենք պատասխանում, մենք պատասխանում ենք միայն լրատվամիջոցների հարցումներին և նման պատասխաններ, ըստ էության, չենք տալիս:

Հայկ Մարության

-Ավագանու գրությունների պատասխանների վերաբերյալ պարզաբանում կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Արմինե Վարդանյան

-Ավագանու անդամների կողմից երբ գրություններ են ստացվում, որոնց վերաբերյալ հստակ տեղեկատվություն առկա չի լինում, ես զրուցում եմ ավագանու անդամների հետ, հայտնում, որ լրացուցիչ կտեղեկացվի: Անհրաժեշտության դեպքում հանդիպումներ եմ կազմակերպում համապատասխան վարչությունների պետերի հետ: Չկա դեպք, որ թերի պատասխան լինի ու ես ավագանու անդամին տեղեկացրած չլինեմ:

Հայկ Մարության

-Պարզաբանում կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժ/պ Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Նախ կցանկանայի շնորհակալություն հայտնել տիկին Վարդանյանին, որովհետև ինչպես ներկայացրեց քննարկումներ իրականում կատարվում են: Մենք մանրամասն քննարկում ենք անցկացրել: Ես երբևիցե բաժնի գործառույթով չեմ առնչվել տվյալ արձանների տեղափոխման և պահպանման մասին որևէ տեղեկատվության: Հետևաբար, ինձնից ոչինչ չէր պահանջվում ասել այն իրականությունը, որին բաժինը տիրապետում է:

Արման Անտոնյան

-Մենք լուրջ խնդիր ունենք: Դա համայնքի գույք է:

Հայկ Մարության

-Ես վստահ գիտեմ, որ այս հարցերի պատասխանն ունի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Մինչ հեղափոխությունը Լենինի արձանը և գլուխը Աբովյան փողոց հ. 2 հասցեի բակում էր՝ Առնո Բաբաջանյան պատկերասրահի բակում: Պատվանդանի քարերը տեղափոխվել էին Երևանի քաղաքապետարանի շինբարեկարգման պահեստային տարածք՝ Արարատյան փողոցի վրա, որը հետագայում մասնավորեցվել է: Հիմա՝ մասնավորեցումից հետո, ինչ վիճակում են այդ քարերը, չեմ կարող ասել, որոշակի հատվածի քարեր կա Մասիս փողոցի վրա՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի բակային հատվածում:

Ինչ վերաբերում է Բանվորի արձանին՝ տեղեկացնեմ, որ Բանվորի արձանն այդպիսի պատվանդան չուներ և արձանի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվություն չունեմ:

Հայկ Մարության

-Բանվորի արձանի գտնվելու վայրի մասին տեղեկատվություն կներկայացնի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը:

Ռազմիկ Մկրտչյան

-Բանվորի արձանը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում՝ մասնավոր տնտեսվարողի տարածքում: Թե ինչ վիճակում է գտնվում, չեմ կարող ասել, չեմ տեսել: Նման հարց առաջացել էր մոտ 7-8 ամիս առաջ և ինձ պատասխանել են, որ գտնվում է այդ վայրում: Եթե տեղափոխելու խնդիր կլինի, պատրաստ ենք աջակցել: Ամեն դեպքում գիտենք, որ չի կորել, չեն ջարդել, գիտենք գտնվելու վայրը:

Արման Անտոնյան

-Ինչպես տեսնում ենք և՛ Լենինի, և՛ Բանվորի արձանների տեղը գիտենք: Ես կխնդրեմ պարոն Արեյանին, որպեսզի ինձ աջակցի՝ գտնելու պատվանդանի այդ մասունքները, հետո կանդրադառնամ, թե ինչ գաղափարի համար է: Կխնդրեմ նաև Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին՝ գտնելու Բանվորի արձանը:

Շնորհակալություն, ես ստացա իմ նամակի արդյունավետ պատասխանը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Իսպիրյան, խնդրեմ: Արթուր Իսպիրյանը բացակայում է դահլիճից: Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սերգեյ Ապրեսյան, խնդրեմ:

Սերգեյ Ապրեսյան

-Պարոն քաղաքապետ, ես հանել եմ իմ հարցը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյան, խնդրեմ:

Մեսրոպ Պապիկյան.

-Պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Երևան համայնքի սեփականության 2019 թվականի գույքագրման աշխատանքներին: Ես մտահոգված եմ գույքագրման ցուցակի որոշակի անճշտությունների համար, որը ենթադրում է վարչության որոշակի անփույթ աշխատանքի հետևանք: Ձեզ հետ մտահոգությունս կիսել եմ և հարցի պարզաբանման համար Դուք քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանին և քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետին հրավիրել եք քննարկման:

Ի պատասխան՝ քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետն ասել է, նորմալ է, որ որոշակի գույքեր չունեն սեփականության վկայական: Ես ընդունում եմ, որ իրականում որոշակի գույքեր կարող են չունենալ սեփականության վկայական: Քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետը նաև հավելել է, որ հողատարածքներին տրվում է սեփականության վկայական, երբ այն դառնում է աճուրդային միավոր:

Երևանի քաղաքապետարանի կայքից վերցրել եմ աճուրդային միավոր հանդիսացող հողատարածքների ցուցակը, որում ընդգրկված է նաև այն փաստաթուղթը, որը հաստատել ենք: Այդ հողատարածքներն ունեն սեփականության վկայական, բայց այդ ցուցակում փաստացի չկան, որն այսօր ավագանու կողմից հաստատվեց: Այսինքն, այն պնդումս, որ որոշակի անփույթ աշխատանքի հետևանքով ավագանու նիստին ներկայացվել է ոչ ճիշտ կազմված փաստաթուղթ, որը հաստատվեց ավագանու կողմից, իրական է:

Օրինակ, նշեմ հասցեն՝ Աշտարակի խճուղու հ.51/81, կարող եմ նաև փոխանցել փաստաթղթի պատճենը, որը Երևանի քաղաքապետարանի կայքում տեղադրված է: Խնդրում եմ մեկնաբանել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

Գարեգին Խաչատրյան

-Բոլոր այն հողամասերը, որոնք հնարավոր է դարձնել առանձին հրապարակային սակարկությունների առարկա և օտարել, այդ հողամասերի համար ճշտվում են հողամասերի սահմանները, թողարկվում են հողամասերի հատակագծերը: Յուրաքանչյուր հողամասին առանձին տրամադրվում է փոստային առաքումների հասցեներ և ներկայացվում է Կադաստրի պետական կոմիտե՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելու համար: Յուրաքանչյուր հողամաս առանձին ունենում է սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Կան հողամասեր, որոնք նպատակահարմար չեն համարվել գրանցել Երևան համայնքի սեփականության իրավունքը: Դեռևս 2009 թվականին, երբ Երևանը ձևավորվեց որպես համայնք, պետական սեփականություն հանդիսացող 11000 հեկտար հողամաս սեփականության իրավունքով փոխանցվեց Երևան համայնքին: Այդ 11000 հեկտար հողամասն առանձին միավորների բաժանել և գրանցելը ֆինանսական առումով մեծ բեռ էր համայնքի բյուջեի համար: Դրա համար մաս-մաս, որը ներկայացվում էր աճուրդի, առանձին գրանցվում և դրվում էր:

Ձեր կողմից նշված Աշտարակի խճուղու հ.51/81 հասցեում գտնվող հողամասի հետ կապված ասեմ, որ գույքի կազմը բաղկացած է 2000 և ավելի միավորներից: Ավտոմատ համակարգ գոյություն չունի, որպեսզի գույքի կազմը պատրաստվի և ներկայացվի ավագանու հաստատմանը: Այդ աշխատանքներն իրականացնում են մարդիկ և հնարավոր է, որ եղել է տեխնիկական վրիպակ՝ երկու հողամասի վկայականները չեն ներառվել գույքի կազմում: Հավաստիացնում եմ Ձեզ, որ գույքի կազմում այդ երկու վկայականի չլինելու հանգամանքը բովանդակային առումով ոչինչ չի փոխում: Այդ թերությունը շատ արագ կշտկվի:

Հայկ Մարության

-Մոդելավորենք, եթե այս գույքը համայնքի բալանսի վրա է և մենք չենք հաստատել, հետագայում, եթե ցանկանանք օտարել, աճուրդի ներկայացնել, չենք կարող:

Գարեգին Խաչատրյան

-Պարոն քաղաքապետ, գույքը հասցեով և մակերեսով ներառված է գույքի ցանկում: Համապատասխան տողը, որտեղ նշվում է գույքի իրավունքի պետական գրանցման վկայականի համարը, վրիպել է և չի նշվել: Բովանդակային առումով ոչինչ չի փոխում:

Հայկ Մարության

-Այսինքն հողամասը կա, բայց վկայականի մասը չկա, ճիշտ է՞:

Գարեգին Խաչատրյան

-Այո, պարոն Մարության:

Հայկ Մարության

-Սա կարևոր է, քանի որ հետագայում եթե ցանկանանք օտարել, չստացվի, որ չենք կարող: Հարցին կանդրադառնա նաև Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը, խնդրեմ:

Սերգեյ Հարությունյան.

-Երեկ խմբակցության նիստի ընթացքում հարցը քննարկել ենք: Մոտավորապես, երեք օր է պարոն Խաչատրյանը նշանակվել է քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար և քաղաքապետի որոշմամբ այդ վարչության համակարգումն տրվել է ինձ: Առաջին քայլը, որը կարող ենք մեր ուժերով իրականացնել՝ բազայի հնարավոր թվայնացումն է, որը քննարկվել և զեկուցվել է քաղաքապետին:

Անշարժ գույքի կառավարման ոլորտն շատ ծավալուն է և սարսափելի մեծ քանակությամբ տեղեկատվություն կա: Տեղեկատվությունը պետք է թվայնացնել, որը

կախված է մեծ ծախսերի հետ: Մեր մոտեցումը հարցերի լուծմանն արմատային է, ոչ մի խնդիր մակերեսային չի լուծվում: Սկզբունք է, եթե ունենք խնդիր, պետք է մինչև վերջ լուծել:

Որդեգրած մոտեցում է, որ մինչ օրս՝ այս մեկուկես տարվա ընթացքում, ինչ արել ենք, թե՛ թվայնացման, թե՛ այլ ծառայությունների առումով, արվել է խորն ինստիտուցիոնալ մակարդակով: Ուսումնասիրությունից հետո անշարժ գույքի ոլորտի թվայնացման աշխատանքները կբաժանվեն որոշ փուլերի և կներկայացվի: Մոտակա ժամանակում կստեղծվի ներկայացուցչական ֆայլ և ներկայացման ընթացքում կտեղեկացվի, թե ինչ է ակնկալվում: Քանի որ ոլորտը շատ մեծ է, ապա որոշակի ճշգրտումներ և որոշակի վրիպակներ կարող են լինել: Ոլորտը դեռևս համակարգվում է մարդկանց ֆիզիկական աշխատանքի միջոցով և թվայնացում չի արվում: Ունենք մեծ խնդիր ինտեգրացիայի՝ անշարժ գույքի և գանձումների բազաների հետ: Մի քանի տեսակ գործառույթներ կան, որոնք անշարժ գույքի կառավարման վարչության գործառույթների հետ փոխկապակցված են, դրանք պետք է քայլ առ քայլ թվայնացնել և բազաները պետք է լինեն ինտեգրված:

Մեսրոպ Պապիկյան

-Պարոն Հարությունյան, շնորհակալություն հավելյալ տեղեկատվություն տրամադրելու համար: Հարցը նրանում է, որ բավականին ջանք չի գործածվել այս ցուցակը կազմելու համար: Ավագանու նիստին ներկայացվել է մի փաստաթուղթ, որը թերի է: Կարելի էր մի փոքր քիչ ալարել, ցուցակն ամբողջական լրացնել ու վերջնական տեսքի բերել:

Հայկ Մարության

-Ես դեմ չեմ, որ պետք է միշտ առավելագույնն անել, բայց չափելի չեմ համարում, թե ինչքան են ալարել: Հնարավոր է, որ անընդհատ աշխատեն և նորից լիներ վրիպակ և հակառակը: Ես գտել եմ, որ տվյալ վարչությունում և տվյալ ոլորտում անհրաժեշտ էր կատարել փոփոխություն: Դա նշանակում է, որ ես առկա իրավիճակից գոհ չեմ և ակնկալում եմ առկա իրավիճակի բարելավում: Փոփոխությունը նոր է տեղի ունեցել:

Պարոն Հարությունյան, ես այդ ֆայլի ներկայացման ժամանակ ակնկալում եմ տեսնել, թե ինչ է արվել: Այդ ամենը կներկայացվի նաև ավագանու անդամներին և կսկսենք աշխատանքը:

Մեսրոպ Պապիկյան

-Երկրորդ հարցս վերաբերում է ԻՄ ՔԱՅԼԸ դաշինքի նախընտրական ծրագրի 42-րդ կետին: Հաղթանակ զբոսայգու արդիականացման, վերականգնման մասին է խոսքը, որում պետք է ներգրավվեր մասնավոր սեկտորը: Կուզենայի իմանալ ի՞նչ քայլեր են արվել այդ ուղղությամբ կամ ի՞նչ է նախատեսվում անել:

Հայկ Մարության

-Այս ուղղությամբ մի քանի հանդիպում եմ ունեցել տարբեր տնտեսվարողների հետ: Նրանք ցանկություն էին հայտնել այս կամ այն կերպ կատարել բարելավման աշխատանքներ, կամ մասամբ, կամ ամբողջությամբ փոխել: Եղել են շատ տարբեր առաջարկներ: Աշխատանքների վերաբերյալ առավել մանրամասն քննարկումները տեղի են ունեցել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանի ղեկավարությամբ:

Պարոն Սեդոյան կարո՞ղ եք ասել Հաղթանակ զբոսայգու արդիականացման, վերականգնման վերաբերյալ այս պահի դրությամբ քանի ակտիվ ծրագիր ունենք, որը կարող ենք իրականացնել: Նախքան պարոն Սեդոյանի անդրադարձին, ասեմ, որ ՀՀ կառավարությունում զուգահեռ գործընթաց է տեղի ունենում, որտեղ ևս ներդրողներ են գտել: Մի քանի ներդրողներ ներկայացել են և՛ ՀՀ կառավարություն, և՛ Երևանի քաղաքապետարան: Ավելի մանրամասն տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետարանի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Պարոն Մեսչյանի մասնակցությամբ հանդիպումներից միայն մեկ հանդիպմանն եմ ներկա գտնվել: Այն տեղեկատվությունը, որին տիրապետում եմ այն է, որ քննարկումն այգու ընդհանրական վերակառուցմանը չէր վերաբերում: Քննարկումը կապված էր ճոպանողու հերթական՝ երկրորդական կայարանի հետ, որը նաև իր հատվածով նախատեսում էր այգու սկզբնական մասում՝ աջակողմյան հատվածում, որևէ կարուսելային ոճի նոր շինության տեղադրում: Առայսօր վերջնական չի ամփոփվել և ներդրողների կողմից վերջնական առաջարկ չի ներկայացվել:

Պարոն քաղաքապետ, մյուս առաջարկների վերաբերյալ Ձեր ներկայացրած տեղեկատվությունից ավելի ստույգ տեղեկատվություն չունեմ:

Հայկ Մարության

-Ցավոք, պարոն Մեսչյանն այս պահին ներկա չէ, նա ավելի համապարփակ տեղեկատվություն կներկայացներ: Ես տիրապետում եմ այդ տեղեկատվությանը, չնայած ոչ այդքան խորը, ինչպես գլխավոր ճարտարապետը: Կազմակերպությունները, որոնք իրենց գումարներով կամ համայնքի, պետության հետ համագործակցելով կիրականացնեն այդ աշխատանքները, ներկայացրել են առաջարկներ: Բոլոր այն առաջարկները, որոնք ներկայացվել են, հավանության չեն արժանացել:

Օրինակ՝ առաջարկներից մեկը եղել է այգու ընդհանուր ձևափոխումը: Սակայն մեզ համար խնդիր էր կանաչ տարածքների բավականաչափ մեծ ծավալով հեռացումը և բետոնի

շատացումը: Այն մեզ համար անընդունելի էր: Իրենք ասում էին, որ եթե ուզում եք մի քանի տարի անց այդ ներդրված գումարը հանենք և այդ գումարներն սկսի մեզ համար ծառայել, պետք է այդպես արվի: Ստեղծվել էր որոշակի փակուղի: Այդտեղ վարձակալությամբ տրված տարածքներ կան, որոնց պայմանագրերը շարունակվում են: Այն կազմակերպությունները, որոնք այդ պայմանագրերի կողմ են հանդիսանում, տարածքները պետք է ազատեն՝ որպես գերակա շահ: Ինչ ներդրող էլ լինի և ինչ առաջարկ էլ ներկայացվի, թեկուզ պետությունը կամ համայնքն իրականացնի այդ աշխատանքները, միևնույն է պետք է լինեն ազատ տարածքներ, որ հնարավոր լինի ինչ-որ գործողություն իրականացնել: Այդ գործընթացը պետության հետ համատեղ սկսել ենք: «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը համագործակցում է ՀՀ կառավարության հետ: Ներկայումս, կոնկրետ ներդրող չկա, որի առաջարկը հավանության է արժանացել:

Անդրանիկ Սեդրյան

-Պարոն քաղաքապետ, մի փոքր հավելում անեմ: Եղել են ծրագրեր, որոնք վերաբերվել են ոչ միայն այգու ամբողջական վերակառուցմանը, այլ ներդրումային ծրագրերի կետային տարբերակներ են ներկայացվել: Դրանցից մի քանիսը կարող եմ թվարկել:

Առաջինը, որը քննարկվում էր պարոն Մեսչյանի գլխավորությամբ՝ «Արագիլ» ռեստորանի վերակառուցման էսքիզ-առաջարկն էր: Ըստ նախագծի՝ նախատեսված էր առկա կառույցի ֆիզիկական չափերից ավելի մեծացում: Հաշվի առնելով համայնքի համար այգու կարևորությունը, գտանք ոչ նպատակահարմար: Այսինքն, եթե կա ինչ-որ առաջարկ, որ հնարավոր ենք համարում քննարկել, դա բացառապես գոյություն ունեցող շինությունն ավելի լավը դարձնելու և առանց ֆիզիկական չափերի փոփոխության առաջարկների քննարկումներն են: Այս պահի դրությամբ նոր առաջարկներ չեն ներկայացվել:

Հայկ Մարության

-Մի քանի կետային լուծումներ ևս եղել են լճի հատվածում: Այդտե՞ղ էլ խնդիրներ կան:

Անդրանիկ Սեդրյան

-Այո, բարձրահարկի խնդիր էր, որը կատեգորիկ մերժվեց:

Հայկ Մարության

-Այս պահի դրությամբ առաջարկները քիչ չեն եղել, բայց համայնքի համար առնվազն ընդունելի չեն եղել: Դրա համար ՀՀ կառավարության և պետական մարմինների հետ համատեղ սկսել ենք գործընթացը, որպեսզի գերակա շահ համարվի, դառնա համայնքային հող: Ժամանակ չկորցնելու համար զուգահեռ աշխատում ենք ներդրողների հետ:

Մեսրոպ Պապիկյան

-Հույս ունեմ, որ այդ խնդրի լուծումը կգտնվի, քանի որ այն մեր նախընտրական խոստումներից է:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, 2 հարց ունեմ: Առաջինը. բոլորս գիտենք, որ հիմա դժվար շրջան է, մարդկանց մեծ մասը չեն աշխատում, ինչի հետ կապված համատիրություններում վճարումները պակասել են, սակայն աշխատանքների քանակը չի պակասել: Վերջին շրջանում, երբ ես մի քանի վարչական շրջանների և համատիրությունների ղեկավարների հետ խոսեցի, հասկացա, որ կա գումարների հավաքագրման խնդիր: Հարցս վերաբերում է, թե այս շրջանում քաղաքապետարանն ինչպես կարող է օգնել համատիրություններին կամ վարչական շրջաններին, որպեսզի տեղում ծագող հրատապ հարցերը լուծում ստանան: Կարող եմ նշել այդպիսի 3 հրատապ դեպք, որից 2-ը տանիքի հետ կապված խնդիր էր, իսկ մյուսը շենքի տակ խողովակն էր պայթել: Տեղյակ եմ նաև այն մասին, որ հրատապության հետ կապված տենդերները մեծամասամբ չեն կայանում, եթե օրինակ տունը ջուր է լցվում, ինչքան կարող են տևել այդ մրցույթները, մինչև այդ հարցը լուծվի:

Ես, իհարկե, ունեմ իմ սեփական առաջարկն այս խնդրի լուծման վերաբերյալ, բայց կցանկանայի լսել Ձեր կարծիքը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, ինչպես հասկացա հարցը բաղկացած է 2 մասից: Մեկը՝ պատրաստ ենք գումար ուղղել այդ խնդրի լուծման համար, թե ոչ: Երկրորդը, եթե գումարը հատկացնում ենք և այդ տենդերները չեն կայանում, այդ դեպքում ինչ ենք անում:

Լևոն Զաքարյան

-Իրականում կարծում եմ այդ հարցի լուծումը մեկն է, այդ պատճառով նշեցի, որ հարցի լուծման իմ սեփական տարբերակն ունեմ: Ճիշտն ասած, տեղյակ չեմ հարցն ում դաշտում է, բայց կարծում եմ, որ հավանաբար կառավարությունից պետք է այդ իրավունքն ստանալ, որ նման դեպքերում հնարավորություն լինի մեկ անձով գնումներ կատարել և լուծել այդ հրատապ խնդիրները:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը: Խնդրում եմ հարցի երկու մասին էլ անդրադառնաք և ասեք արդյոք ֆինանսներ ունենք, թե ոչ:

Հայկ Սարգսյան

-Ֆինանսներ միշտ էլ ունենք, հարցն այն է, թե որն է ծախսման գերակա ուղղությունը: Երբ մենք «ինչ անենք» քննարկումն ենք սկսում, ապա այդ դեպքում ավելի մեծ է դառնում «ինչ չանեք» քննարկումը: Հիմա կան հրատապ խնդիրներ, և, ներկա դրությամբ պայմանավորված, համատիրությունները չեն կարողանում գումարներ հավաքագրել ու աշխատանքներ իրականացնել: Իհարկե, երբ հարցը բնակչության շահերին է առնչվում, պետք է լուծումներ տանք: Պետք է նշեմ, որ ի սկզբանե, համատիրությունների ուղիղ ֆինանսավորման մոդելը ցանկալի չէ, որովհետև այսօրվա դրությամբ համատիրությունների հաշվետվողականության մակարդակն այնքան ցածր է, որ այդ գումարները տրամադրելու և դրանց ծախսման կամ պատշաճ նպատակային օգտագործման հետևից գնալու խոչընդոտներ առաջանալու ռիսկ ունենք: Ելնելով իրավիճակից, բնականաբար, կապահովենք այն անհրաժեշտ միջոցները, որոնք հարկավոր են բնակչության կենսամակարդակի և հարմարավետության պայմանները կարգավորելու համար: Այս ամենը հնարավոր կլինի այն պայմանով, որ վարչական շրջաններն ապահովեն համատիրությունների հետ այնպիսի հարաբերություններ, որ այդ հաշվետվությունները շատ հիմնավոր և ստուգելի լինեն:

Ինչ վերաբերում է 2-րդ խնդրին, այդ ուղիղ գնումներն ամենևին ցանկալի չեն և մենք ամեն ինչ անում ենք, որ գործը դրան չհասնի: Արդեն նշեցի, որ նույնիսկ հրատապ աշխատանքների պարագայում մինչև 3 անգամ մրցույթը չի ձախողվում, մենք չենք գնում դրան: Այդ ժամանակ ես խորհուրդ եմ տալիս ծայրահեղ անհրաժեշտության դեպքում նոր բարձրացնել ուղիղ գնման հարցեր, որովհետև դրանք շատ վատ ռիսկեր են առաջացնում: Նույնիսկ, եթե ռիսկեր չկան, բայց այդ գործընթացներում դրանք առաջանում են:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, իրականում ես քաջ գիտակցում եմ ուղիղ գնումների ռիսկերը: Այդ պատճառով խոսքս վերաբերում էր հրատապ դեպքերին, հատկապես, որ ուղիղ գնումների դեպքում մրցույթ չէ, բայց գնհարցման իրավունք կա: Առնվազն 3, 4 կազմակերպությունից կարելի է գնհարցում անել և արդյունքում ընտրել ցածր գին:

Հաջորդ հարցս վերաբերում է քաղաքում ներկայումս կատարվող շինարարական աշխատանքներին: Հատկապես, կցանկանայի իմանալ, քաղաքապետարանի կողմից քաղաքում նախատեսված մեծածավալ շինարարական աշխատանքների և շահած

մրցույթների մասին: Սկսել ենք արդյոք ամբողջական թափով կատարել աշխատանքները և սրա հետ կապված մի հարց ունեմ. առավոտյան նկատեցի, որ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դիմացի մայթը նեղացնում են: Այս վերջին շրջանում, սովորաբար, մայթերը փորձում ենք լայնացնել, բայց այդ հատվածում 50-70 մ մայթ նեղանում է: Կցանկանայի իմանալ, թե որն է պատճառը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Զաքարյան, ինձ էլ է հետաքրքիր այդ հարցը: Հարցին կպատասխանի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը, խնդրեմ:

Գրիգոր Հարությունյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Նշեմ, որ շինարարական աշխատանքները մեծ մասշտաբով արդեն սկսվել են: Բոլոր վարչական շրջաններում, բացի մեկից, ասֆալտապատման աշխատանքներն սկսվել են: Մանկապարտեզների հետ շինարարական աշխատանքների մասով 4 պայմանագիր կնքված է, մնացած մրցույթներն այսօր կայացավ: Այդ պայմանագրերը տաս օր հետո կկնքվեն և կսկսենք շինարարական աշխատանքները: Կարող ենք սկսել մանկապարտեզների բակային տարածքների բարեկարգման, տանիքների, ֆասադների վերանորգման աշխատանքները: Ունենք 11 նախագիծ, որոնք կնքման փուլում են: Կա նաև 6 նախագիծ, որ հաղթողները ճանաչվել են և մոտ օրերս կներկայացնեն նախագծերը: Նշեմ նաև, որ ունենք մայթերի եզրաքարերի աշխատանքներ: Սա վերաբերում է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դիմացի մայթի նեղացման հարցին: Թատրոնի ներկայացումների ժամանակ երթևեկելի մասի 2-րդ, 3-րդ գոտին զբաղեցվում է և մեծ մասշտաբով խցանումներ է լինում: Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի կողմից մեզ ուղղված գրությունների հիման վրա, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության պահանջով, մայթից ընդամենը 80 սմ նեղացվում է: Կառուցվում է գրպանիկ, որտեղ թատրոնի աշխատողները կկարողանան նաև իրենց մենքենաները կանգնեցնել:

Հայկ Մարության

-Ամենայն հարգանքով եմ մոտենում թատրոնի աշխատողներին, այնուամենայնիվ, դուք գիտեք իմ մոտեցումը: Թող հեռու կանգնեցնեն մեքենան, ոտքով գան, միևնույն է բոլոր մեքենաներն այնտեղ չեն տեղավորվելու: Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնիում 1000-ից ավելի հանդիսատես կարող է տեղավորվել, դուք պատկերացնում եք բոլորի համար կայանատեղի կառուցել: Դա նշանակում է, եթե մի քանիսը մեքենաները կայանեն, մնացած մասը ոտքով կամ այլ տրանսպորտային միջոցով պետք է գան:

Ասեմ, որ հարգում եմ ճանապարհային ոստիկանության կողմից ներկայացրած պահանջը, սակայն քաղաքի կենտրոնական հատվածում մայթի նեղացման հարցը պետք է ունենա ավելի լայն քննարկում: Ես դեմ եմ այս տարբերակով խնդրի լուծմանը և կխնդրեի վաղն ինձ մանրամասն տեղեկատվություն ներկայացնել այս հարցի վերաբերյալ, որպեսզի հասկանանք, թե ինչ պետք է անենք:

Լևոն Զաքարյան

-Պարոն Հարությունյան ես Ձեզ կուղարկեմ բազմաթիվ նկարներ, որտեղ մեքենաները կայանած են Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հարակից մայթին: Վստահ եմ, որ այդ նույն մեքենաները, հետագայում ևս, գալու և կայանելու են այդ մայթի վրա, ինչը տարիներ շարունակ ընդունված երևույթ է: Ինքս մի քանի անգամ զանգահարել եմ ճանապարհային ոստիկանություն, բայց հետո հասկացա, որ այդտեղ այդպիսի մշակույթ է ձևավորված: Նշեմ, որ մայթը նեղացնելով ոչ մի հարց չի լուծվելու և չեմ կարծում, որ թատրոն գալու համար, մեքենան պարտադիր պետք է թատրոնի դիմացը կանգնեցնել: Հատկապես, որ դա ծառայողական մուտք է:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Ա. Եփրիկյան